

համար այսպիսի կեղեքումի մը , որմէ զերծ չէ ոչ մէկ ընտանիք։ Դեռ աւելին կայ . ո՞չ օրէնքներու եւ ոչ նոյնպիսիներու արտօնագրերու մէջ , որոնք պաշտօն ունին այդ օրէնքներու գործադրութեամբ միջոց խորհելու այդպիսի բացայայտ գողութեան մը դէմ , չկայ նախատեսւած այնպիսի յափշտակութիւն մը , որմէ սակայն իրապէս կը տարուի մարդկութիւնը : Ամէն պարագայի մէջ , այսշափս բաւական է ցուցը ներու համար , թէ պատժական օրինագիրքը պատրաստւած է կառավարող գասակարգի ձեռքով , որը կ'հսկէ անոր գործադրութեան ո՞չ թէ կաարելու . այլ ընկերական մակարդակէն վար պահելու համար տկարները :

Օրէնքը , առնուազն ինչ ինչ ձեւերու տակ , կ'թոյլատրէ խարդախութիւնը : որով գործելու մասը կ'կայանայ հասարակութեան հաւատացնելու մէջ , թէ նոյնչափ արժան զնած է իրը , որ այդ գնով նոյն իսկ վաճառականին անկարելի պիտի լինէր ինքն իրեն համար հայթայթել : Լրագիրները զգւելու չափ լեցուն են այսպիսի հակասական , ստայօդ ազգերով : Մեր շնչերը , ճանապարհները , աղտոտւած են կեղտու ազգափնդերու վրայ փակցւած ակներեւ ու գոենիկ ստախօսութիւններով , որոնց միակ նպատակն է կողոպտել անցորդներու դրամը : Մեր բոլոր վաճառականները , արհեստագործները ստախօսութիւննե՛ր է որ կ'պոռաւ հազարումէկ ձեւերու տակ , իրական գնէն աւելի սուզ ծախելու համար՝ արտագրութիւններ :

Պատժական Օրինագիրքը լուր կը մնայ սակայն . որովհետեւ նա հրատարակւած չէ երբեք այդ գասակարգը հարւածելու համար . . . Հարուսաց երբեք չպիտի իրնայ Պատժակած Օրինագրքի մկրտին տակ :

Թրգ. Ֆ. Գրիգ. Ս. Ս'ԼԵՐԴ-ՑԵՆՆԵ

ԳԼՈՐԷՆՍ Ս. ԴԱՐԲՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԱՎԱՐ

ԱՊԻՄԱՀԱՅՈՒԹ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ ԴԵՐԱՎԱՐ

ՑՈՎԻ ԽԱՆԱԿԱՆ ԿՈՍՏԱՄԵԿԱԿ

ՄՆԱՆԵԼ է Ալէքսանդրապոլում 1868 թուին յուրիսի Յ-ին Նախ տարական կրթութիւնը ստացել է տանը ծնողների մօտ , յետոյ Արարջանեանցի մասնաւոր գպրոցում : Տասը տարեկան հասակում մտնում է Գէորգեան ճեմարանի 1 դասարանը : իբրեւ ելքեւեկ աշակերտ , շարունա-

կելով մինչեւ Վ.-րդ գասարանը , որտեղից դուրս գայով անցնում է Յա-
գուի ընկալական դպրոցը , ուր եւ աւարտում է իր մշշակարգ ուսումը :

Իսկ 1888 թուին շարունակում է բարձրադրոյն ուսումը Նոր-Ալէք-
սանդրիայի (Պուլանա , Վարչաւայի մօտ) գիւղատնտեսական ճեմարա-
նում . այնտեղից աւարտած ։ 1892 թուին հրաւիրվում Ալէքսան-
դրապոլի Ա. Փրկչի դպրոցը տեսչական պաշտօնով , ուր երեք տարի ծա-
ռայելուց յետոյ հեռանում է տեղական հոգաբարձութան հետ ունե-
ցած ընդհարման պատճառով : 1895 թուականից սկսած նա պարապում
է մասնաւոր դասերով եւ գրականութեամբ . աշխատակցում է «Արձա-
գանքային» . և ծարազ եւ «Աղքիւր» . «Դրական եւ պատմական հանդէս ։
Թերթերին : 1898 թ. հրաւէք է ստանում Երեւանի թեմական դպրոց՝
իրեւ գասատու բնագիտական առարկաների : Մի տարի ու կէս մնալուց
յատոյ հեռանում է Բնենիկ վարդապետի տեսչութեան օրով : Այնուհետեւ
մնացած տարիները մինչեւ ներկայումս նա իր կեանքը անց է կացնում
իր ծննդավայր քաղաքում , հայրենական տան խաղաղ յարկի տակ :
Գլխաւոր զբաղմունքը մասնաւոր գասաւանդութիւններն է լինում եւ
անձը նուիրուած գրական դործերին :

1896 թուին լոյս է տեսել նրա բանաստեղծութիւնների ժողովածուն
«Ենթակի լեգոնդաներից եւ մողովրդական կեանքից վերնազրով : Գիր-
քը արժէ 30 կոսէկկ . բաղկացած 78 էջերից , ընդ ամէնը 13 լեզունդա-
ներ եւ ժողովրդական կեանքից վերցրած 9 բանաստեղծութիւններ .
բոլորն եւ ինքնուրոյն . որոնցից հինգը առաջին անգամ են լոյս տես-
նում : միւսները արտատպութիւններ՝ զանազան ժամանակներում հրա-
տարակուած՝ վերը յիշած հանդէսներից : Կոստանեանի՝ իրեւ բաւա-
տեղծի՝ ուղղութիւնը եւ արժանաւորութիւնը բնորոշելու համար նախ
եւ առաջ հարկ ենք համարում ներկայացնել ընթերցողին նրա ստանա-
ւորներից մի կտոր :

Մի բա են շարժում : կեանք են տալիս ժողովրդի ասուածքներ .

Նոքա լի են անկեղծութեամբ , նոքա վառում մեր սրտոր .

Հա՛յ ժողովուրդ , ես սիրում եմ կեանքիդ վիշտն ու խնդութիւն .

Ես սիրում եմ սախնիքներիդ աւանդական պատմութիւն . . .

(Ս. Մեսրոպ Մաշտոց էջ 32)

Եւ , արդարեւ . երիտասարդ բանաստեղծը ոգեւորուած գրչով ներ-
կայացնում է մեզ հայ ժողովրդի կամքի հայելին իր բազմակողմանի
երեւոյթներով , իր ժամանակութիւններով : Այնտեղ զետ
մրափ ւմ է հայրենի երկիրը — Երբակ գաւառը , նահապետական աւ-
անդական ծովացած անմեզ երգերի . եւ հաւատալիքների պարզութեան
մէջ . Եւ ահա՛ պ . Կոստանեանը կենդանութեան արձագանդ է տալիս իր
այդ հայրենի դարեւոր քնած բնութեան , նկարագրելով պատկերաւոր

դարձուածքներով ու գեղեցիկ համեմատութիւններով նրա ամբողջական դրաւիչ տեսարանները իրենց նուրր գեղեցիկութեամբ — սարերը՝ ալվան ծաղիկներով, ձորերը՝ փրփրուն զետերով, անտառները՝ աղմկող խորհրդաւոր սօսափիւններով : Էները՝ բանաստեղծական ջրերի բիւրաւոր ծփանքներով, երկինքը՝ աստղալից իր պայծառ կապոյտով : Դաշտերն ու մարգերը՝ ծիլ-խոտերով, չող ու ցողով . . . Մի տեղ աշուղն է «Հունգուրն» զարկում ուսմկական մրմունջների սրտասուչ եղանակներ եւ Հայրենասիրական դիւցազններգութիւններով սրտերը վառում, մի տեղ Արփաչայի ալիքներն են զարնվում ափերին եւ հոգին զարթիցնում վաղեմի սիրոյ արկածների յիշատակներով, մի տեղ Լուս-Ամրոցն է քուն մտել զետի անուշ օրօրներից, մի տեղ Փարաւնայ լիճն է փոռւած լեռների բարձրում, մի տեղ Ս. Մեսրոպ Մաշտոցն է երազի մէջ հայ այրերինական : տառերը մագազաթի վրայ ձեւակերպելու տենչով վտոռւած, միւս տեղ Վանայ բերդն է հպարտօրէն բազմած ծովակի կապոյտ ջրերի վրայ իր վսեմ խրոխտութեամբ, մի ուրիշ տեղ էլ գըժառադդ կինն է սրտաշարժ ողբում «վշտի աշխարհը եւայլն» . . .

Այս՝ այդ բանաստեղծական գրկոյկում ժողովրդական կեանքին վերտքերեալ կենդանի նկարագրութիւններ կան, անկեղծ զգացմունքի տրամադրութեամբ :

Սիրեցի՝ կեանքդ, գիւղացի՝ նղբայր,
Եւ հեռու կեանքում իմ պանդխտութեան՝
Անապատում սիրով երգեցի նորան :
Ես քո դարունդ անչափ սիրեցի . . .
Երբ նա բացվում էր մածկական ժպտով
Եւ բնութիւնը պեճում աշխուժով . . .
Երբոր լեռները զարդարվում էին,
Կեանք էր ներշնչում նոր զարթած երկիր .
Երբ դու զութանով զաշտ գնում էիր . . .
Բըռով ցորենը — առո՛յդ հատիկներ,
Պարզ առաւօտեան սփորւմ ու սփոռում,
Եւ Ստեղծօղին գու աղօթք անում . . . եւայլն

(«Գիւղացու կեանքը» երես 58)

Բարձք սարին հաւաք չի հասնում,
Միայն անուշ հովք է փշում . . .
Խսկ այն բարձրում՝ աստղերու հետ,
Լուսաւորչայ վառ է կանթեղ 1)
Մատաղ հոգուդ — սրտու աղպէր,
Այս կանթեղը քեզ թուր ու թեւ,
. . . Սարի կրծքում լիքն են ակներ,
Այդ ակները — աղբւրներն են . . .

(1) Աւանդութիւն կայ, որ Ս. Լուսաւորչայ կանթեղը Արագածի վրայ կախուած միշտ վառ է : (Յ. Կ.)

Ակնու աղբիւր, իմ քաղցր աղպէր,

Փափագ սրտիս շողն ու ցօղն են :

Երնէ՛կ, աղպէ՛ր, քիզ սիրողին,

Ե՞րբ կը հասնիս քու մուրազին .. եւայն

(«Թագունի երգը էջ 16)

Ս. Կառուելով պիտի նկատենք, որ պ. Կոստանեանի ոտանաւորներում տաղաչափութեան վերաբերեալ անհրաժեշտ պահանջներին բաւարարութիւն տուող շեշտեր չեն երեւում. եւ մանաւանդ լեզուի կատարելագործուած մշակութիւն, որի պակասութիւնը խոր զգացմունքներ եւ յաջող մտքեր արաայայտելու մէջ չեն օգնում քանաստեղծին: Կոստանեանի լեզուն վասէ է եւ ճապաղ, որի մշակման նուուրը ձեւերի վրայ պարտաւորէ առանձնապէս ուշազրութիւն դարձնել, եթէ չէ ուղում իր բանաստեղծական նիւթի ներքին արժանաւորութիւնները խանգարուած ակննել: Ծատ աեղերում յանդերի եւ վանդերր համաշափութիւնները զաւանանումնեն եւ տգեղ բառերի գործածութիւնը դժուար է կացուցանում տահուն ընթերցանութեան գործը: Եւ նա չունի այն բանաստեղծական երկնաւալաց թորիչների գործրկութիւնը, այն ընտրած ճիշդի արևեատագիտական հմտութիւնը, այն նուուրը եւ զգայնիկ շեշտերը եւ ներշնչումները, այն սրաի եւ հոգու ներքին արտայայտութեան կրակը եւ զօրութիւնը, ինչ որ ունի իր հայրենակից բանաստեղծ պ. Ա. Խաչակեանը: Երկուսն էլ նոյն տեսակի երկիշներ են, մի եւ նոյն ուղղութեան տէր, իբրիւ ժողովրդական կեանքի մօտիւներ գաշնակողներ, բայց արտայատման ձեւերի մէջ ունին իրենց զգալի տարբերութիւնը:

Պ. Խաչակեանը ունի պարզ, զգայուն, քնքոյլ մեղրալեզու ոտանաւորներ, որոնց մէջ անկեղծ բորբոքուած սիրոյ կայծեր ենք տեսնում: Ներշնչուած վարվառն երիտասարդական կրորվով ու գորովով, իսկ պ. Կոստանեանի մէջ ընդհակառակը բանաստեղծական կրակը՝ հանգիւլու մօտթագուած է մոխրի շեղջիւ տակ . . . Բաւական ժամանակ է, նա չէ երեւում դրական ասպարիզում: չը լինի՞ քնարը լուսթեան է դատապարաել, չէ՞ որ կոռուի յաղթութիւնը յարատեւողին: աւելի յարաչաղիմողին է պատկանում: Զը նայելով պ. Կոստանեանը խահակեանից առաջ է սկսած, բայց նա չը կարողացաւ այն յաջողութիւնը, այն հո չակձեռք բերել, ինչպէս որ պ. Խահակեան Վերջինս կարծես յաղթութեան կանալ դափնիին Կոստանեանի ձեռքից Խլեց՝ աւելի առաջ անցնելով իր ընտրած զրական ասպարիզում: Մող պ. Կոստանեան իր բանաստեղծական ընդունակութիւնները աւելի հասունացնէ, զրագացնէ, կատարելագործման ննթարկելով ճղոպրած, զանդաղ լեզուի անմշակ ձեւերը եւ մութ ու խորթ արտայայտութիւնները, եթէ, յիրաւի, ցանկանում է պատկան լինել թէ՛ իբրեւ եւ թէ՛ այն հասարակութեան, որի համար կանչուած է ինքը հնչեցնելու պառնասեան աղու գաշնակներ. . .

ԴՐԻԳՈՒՐ ԲԱԼԱՍՍԱՆԵԱՆ